Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
t. +44 (0)20 7373 8133 *Pastoral office* email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading, 25th November 2018 Bulletin No 49/18

1st Sunday of Advent

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-10

The Epistle of St Paul to the 1 Thessalonians 1:1-10

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԷՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 12:13-31

Paul's Letter to Thessalonians

Բազմութեան մէջէն մէկը ըսաւ անոր. «Վարդապե՛տ, ըսէ՛ եղբօրս՝ որ ինծի հետ բաժնէ մեզի ինկած ժառանգութիւնը»: Ան ալ ըսաւ անոր. «Մա՛րդ, ո՞վ նշանակեց զիս իրաւարար կամ բաժնող՝ ձեր վրայ»: Ապա ըսաւ անոնց. «Ուշադի՛ր եղէք եւ զգուշացէ՛ք ագահութենէ. որովհետեւ մէկուն ստացուածքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը»: Առակ մը ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Հարուստ մարդու մը արտերը տուին առատ բերքեր, եւ ան կը մտածէր ինքնիրեն՝ ըսելով. “Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ չունիմ՝ ուր բերքերս ժողվեմ”: Եւ ըսաւ. “Սա՛ պիտի ընեմ. պիտի քանդեմ ամբարներս, պիտի կառուցանեմ աւելի՛ մեծերը, հոն պիտի ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս, եւ պիտի ըսեմ անձիս. «Ո՛վ իմ անձս, շատ բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար. հանգչէ՛, կե՛ր, խմէ՛ եւ զուարճացի՛ր»”: Բայց Աստուած ըսաւ անոր. “Անմի՛տ, այս գիշեր անձդ պիտի պահանջուի քեզմէ. ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ պատրաստած բաներդ”: Այսպէս է ան՝ որ գանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ մօտ»:

Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Ուստի կը յայտարարեմ ձեզի. “Մի՛ մտահոգուիք ձեր անձին համար՝ թէ ի՛նչ պիտի ուտէք, ո՛չ ալ մարմինին համար՝ թէ ի՛նչ պիտի հագնիք. որովհետեւ անձը կերակուրէն աւելի է, ու մարմինը՝ հագուստէն: Դիտեցէ՛ք ագռաւները, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, որոնք ո՛չ շտեմարաններ ունին, ո՛չ ալ ամբարներ, բայց Աստուած կը կերակրէ զանոնք. դուք ո՛րչափ աւելի կ՚արժէք թռչուններէն: Ձեզմէ ո՞վ կրնայ մտահոգուելով կանգո՛ւն մը աւելցնել հասակին վրայ: Հապա եթէ չէք կրնար ամենափոքր բանը փոխել, ինչո՞ւ կը մտահոգուիք ուրիշ բաներու համար: Դիտեցէ՛ք շուշանները, թէ ի՛նչպէս կ՚աճին: Ո՛չ կ՚աշխատին եւ ո՛չ կը մանեն. բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: Ուստի եթէ խոտը, որ այսօր դաշտի մէջ է ու վաղը փուռը պիտի նետուի, Աստուած ա՛յդպէս կը հագուեցնէ, ո՛րչափ աւելի ձե՛զ, թերահաւատնե՛ր: Ա՛լ դուք մի՛ փնտռէք թէ ի՛նչ պիտի ուտէք եւ ի՛նչ պիտի խմէք, ու մի՛ շփոթիք. որովհետեւ աշխարհի ազգե՛րը կը փնտռեն այդ բոլոր բաները, եւ ձեր Հայրը գիտէ թէ ասոնք պէտք են ձեզի: Հապա դուք խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի”»:

2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings’

Luke 12:13-31

The Parable of the Rich Fool

Someone in the crowd said to him, “Teacher, tell my brother to divide the inheritance with me.”

Jesus replied, “Man, who appointed me a judge or an arbiter between you?” Then he said to them, “Watch out! Be on your guard against all kinds of greed; life does not consist in an abundance of possessions.”

And he told them this parable: “The ground of a certain rich man yielded an abundant harvest. He thought to himself, ‘What shall I do? I have no place to store my crops.’

“Then he said, ‘This is what I’ll do. I will tear down my barns and build bigger ones, and there I will store my surplus grain. And I’ll say to myself, “You have plenty of grain laid up for many years. Take life easy; eat, drink and be merry.” ’

But God said to him, ‘You fool! This very night your life will be demanded from you. Then who will get what you have prepared for yourself?’

“This is how it will be with whoever stores up things for themselves but is not rich toward God.”

Jesus teaching the twelve disciples

Do Not Worry

Then Jesus said to his disciples: “Therefore I tell you, do not worry about your life, what you will eat; or about your body, what you will wear. For life is more than food, and the body more than clothes. Consider the ravens: They do not sow or reap, they have no storeroom or barn; yet God feeds them. And how much more valuable you are than birds! Who of you by worrying can add a single hour to your life [b] ? Since you cannot do this very little thing, why do you worry about the rest?

“Consider how the wild flowers grow. They do not labor or spin. Yet I tell you, not even Solomon in all his splendor was dressed like one of these. If that is how God clothes the grass of the field, which is here today, and tomorrow is thrown into the fire, how much more will he clothe you—you of little faith! And do not set your heart on what you will eat or drink; do not worry about it. For the pagan world runs after all such things, and your Father knows that you need them. But seek his kingdom, and these things will be given to you as well.

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

"Ո՞ւմ վրայ ես յոյս դրել..." (Ես. 36:5):

Այսօրուայ խոկումը թերեւս առաւել մեր կեանքի յենարան եղող, մեր կեանքն ուղղորդող այս հարցումի շուրջ է՝ ո՞վ է մեր յոյսը, ո՞ւմ ենք ապաւինում մեր կեանքի փոթորիկների, նիւթական եւ բարոյական վայրիվերումների մէջ: Այս հարցը հնչում է Երուսաղէմը պաշարած զօրաւարի բերանից եւ ուղղուած է Աստծոյ ժողովրդի առաջնորդին՝ հեգնելով երուսաղէմցիների հաւատն ու ապաւինումն առ Աստուած:

Ո՞ւմ վրայ ես յոյս դրել..

Ի՞նչ է մեր պատասխանն այս հարցին: Մեր յոյսը ծանօթ կամ հարազատ մարդի՞կ են, մեր բանկային կուտակումնե՞րն են, գուցէ բժիշկնե՞րը կամ հոգեբաննե՞րը, գուցէ պետութի՞ւնը սոցիալական (social) իր ծառայութիւններով: Շարքը կարող է երկարել...

Այսօր Սուրբ Գիրքը մեզ ոչ միայն հարց է առաջադրում, այլեւ պատասխան: Երբ Քրիստոս ասում է. "Ես եմ Ճանապարհը, Ճշմարտութիւնը եւ կեանքը", դա միայն Իր աշակերտներին եւ Իր ժամանակի մարդկանց չասաց: Մենք յաճախ Աւետարանի միջից լսում ենք Քրիստոսի այս արտայայտութիւնը՝ "ամէն, ամէն ասեմ ձեզ", որ նշանակում է՝ "Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում, յաստատ իմացէք": Սա յաւիտենական՝ ժամանակից վեր, բոլոր ժամանակների համար եղող որակում է՝ ի տարբերութիւնն կարճաժամկէտ լուծումների:

Ո՞ւմ վրայ ես յոյս դրել..

Աւետարանական անմիտ հարուստի պատմութիւնը սրա մասին է մտածել տալիս:

3: List of the Feasts celebrated in the Armenian church

Հարուստի լուծումը շատ կարճաժամկետ է՝ միայն այսաշխարհային: Բայց որքան մարդիկ կան, որ դեռ իր պէս են մտածում:

Շատ ժամանակակից մտածողներ փորձ են անում Սուրբ Գիրքն այլեւս հնացած ցոյց տալ, իբրեւ այս ժամանակակից կեանքին անյամապատասխան: Բայց, ի վերջոյ, գիտական եւ տեխնիկական առաջընթացի հետ մարդիկ չեն փոխուել: Նոյն կերպ են մարդիկ սիրում, զոհաբերւում, կարօտում, զիջում, ներում, մխիթարում եւ սատարում: Մեր կեանքի մէջ շարունակում են կենսական մնալ հիւանդութեան, դաւաճանութեան, յուսախաբութեան, մահուան եւ ընդհանրապէս դժուարութիւնների եւ դժբախտութիւնների մէջ դեղատոմս եղող աստուածային հաւատը, յոյսն ու բժշող սէրը: Աստուած է մեր Հայրը, մեր օգնականը, ապաւենը, օրէնսդիրը, բժիշկը, մխիթարիչը, յարութիւն տուողն ու վերականգնողը:

Ուրեմն, սովորենք չափից շատ չը մտայոգուել ուտելիքի եւ խմելիքի հարցերով , յիշենք որ մենք հոգու Հայր ունենք, իսկ մեր "Հայրը գիտէ, որ այդ ամէնը պէտք է" մեզ: Առաւել կարեւորե՛նք Քրիստոսի կանչը. "Հետամո՛ւտ եղէք Աստծոյ արքայութեանը, եւ այդ ամէնը աւելիով կը տրուի ձեզ" (Ղուկ.12.31) եւ երբ հարցնեն մեզ՝ "ո՞ւմ վրայ ես յոյս դրել", չվարանենք ասելու, որ մեր յոյսը եւ ապաւենը մեր Փրկիչն է՝ Յիսուս Քրիստոս, Ում Հօր եւ Սուրբ Հոգու հետ փառք յաւիտեանս, ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Ս. Գրիգոր և Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետների և Մյուռոն եպիսկոպոսի հիշատակության օր

Ս. Գրիգոր Սքանչելագործը ծնվել է Պոնտոսի (Սեբաստիա) Նեոկեսարիա քաղաքում ազնվականի ընտանիքում, շուրջ 210 թվականին: Գրիգորը մտադիր էր հմտանալ օրենսգիտության և հռետորության մեջ, սակայն Աստված նրա և իր եղբոր համար այլ ճանապարհ էր նախասահմանել. նրանք ուսանում են Աթենքում, ապա Պաղեստինյան Կեսարիայում՝աշակերտելով այն ժամանակվա ամենահեղինակավոր քրիստոնյա մտավորականին՝ Որոգինեսին: Նեոկեսարիա վերադառնալով՝ նա ձեռնադրվում է քաղաքի եպիսկոպոս: Ավանդության համաձայն՝ Ս. Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրվելու օրերին Նեոկեսարիայում հազիվ 17 քրիստոնյա կար, իսկ մահվան օրերին՝ ընդամենը 17 հեթանոս: Իր անվան հետ կապված բազմաթիվ հրաշքների համար արժանացել է «Սքանչելագործ» մակդիրին: Ս. Գրիգորն աչալրջությամբ կառավարեց թե իրեն վստահված թեմն ու ժողովրդին, թե եղավ մեծ մատենագիր՝ թողնելով բազմաթիվ աստվածաբանական երկեր:
Նա վախճանվել է 270 թվականին խաղաղ մահվամբ:
Ս. Նիկողայոս Հայրապետը ծնվել է Փոքր Ասիայի Լիկիա գավառի Բաթարա քաղաքում (ներկայիս Անթալիայի մոտակայքում): Փոքր հասակից կորցնում է մեծահարուստ և բարեպաշտ ծնողներին և մեծանում իր քեռու՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի խնամքի ներքո: Ավետարանական պատգամը՝ <<Վաճառիր ունեցվածքդ և բաժանիր աղքատներին>>(հմմտ. Մտթ. ԺԹ 21), իր կյանքի նշանաբանն է դարձնում՝ խնամելով աղքատներին, հիվանդներին, բանտարկյալներին և որբերին: Ժողովրդի կամքով դառնում է Զմյուռնիայի եպիսկոպոսը: Հալածանքների ընթացքում աքսորվում է, սակայն չի դադարում ամենուր Ավետարանը քարոզելուց: Խաղաղություն վերահաստատվելուն պես վերադառնում է իր աթոռը, մասնակցում 325 թվականին Նիկիո Տիեզերաժողովին: Մահացել է 326 թվականին: Ընդհանրական Եկեղեցու ամենասիրված սրբերից է՝ առավելաբար հայտնի Սանտա Կլաուս անվամբ:
Ս. Մյուռոն եպիսկոպոսը ծնվել է մոտ 350 թվականին: Նա մեծ հրաշագործ էր՝ հայտնի իր ողորմությամբ և բարեգործությամբ: Քրիստոնյաների հալածանքների ժամանակ, երբ Ս. Մյուռոնը Կրետեի եպիսկոպոսն էր, քաջալերում և խրախուսում է բոլորին՝ ինքը ևս անհամբեր սպասելով նահատակության պսակն ստանալուն: Սակայն Աստծո կամքով հասնում է մինչև խոր ծերություն՝ 100 տարեկանում ավարտելով իր բարեպաշտ կյանքը:

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mr & Mrs Raffi Manoukian and Family for the soul of their Uncles and Great-uncles the late **HAMPARTSOUM KELEDJIAN (Համբարձում Գելեճեան)** and **VARTKES KELEDJIAN (Վարդգես Գելեճեան)**, also for all the old and new deceased members of the **KELEDJIAN** and **MANOUKIAN** Families.

By Jojaghaian Family for the soul of their Parents and Grandparents the late **HAROOTYUN JOJAGHAIAN (Յարութիւն Ջոջաղաեան)** and **PARINAZ SIMONIAN-JOJAGHAIAN (Փարինազ Սիմոնեան-Ջոջողաեան)**, on the 1st anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **JOJAGHAIAN** and **SIMONIAN** Families.

By Liza and Serop Chorekdjian and Family for the soul of their Parents, Grandparents and Great Grandparents the late **LEVON** and **MARIE SHAHINIAN (Լեւոն եւ Մարի Շահինեան)**, **ZABEL** and **HOVANESS SHAHINIAN (Զապել եւ Յովանէս Շահինեան)**, **AGAVNIE** and **ARMENAG MISSIRIAN (Աղաւնի եւ Արմենակ Միսիրեան)** and for all the old and new deceased members of the **SHAHINIAN MISSIRIAN** and **CHOREKDJIAN** families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Including Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

Please remember our Church in your prayers.

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".
Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

I wish to arrange a standing order/make a donation £ ……to St Yeghiche Armenian Church Parish.

Name: ……...……...

Address: ..……...……..

Tel:..……Email:...……...….

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms available from Parish Council.